# Ազատվում են կրակով բորբոքված հնոցից

**Ցուցումներ:** Այս վարժությունը կատարիր հանգիստ միջավայրում: Աստվածաշնչից համարներն ընթերցելիս պատկերացրու, որ դու ներկա ես նկարագրվող իրադարձությանը: Մտովի պատկերացրու տեսարանը: Լսիր մարդկանց ձայները: Փորձիր զգալ, թե գլխավոր կերպարներն ինչ են զգում: Կենդանի դարձրու աստվածաշնչային արձանագրությունը:

**Գլխավոր կերպարները:** Սեդրաք, Միսաք, Աբեդնագով և Նաբուգոդոնոսոր:

**Ներկայացված դրվագը:** Փորձությունների ներքո ձևավորվում է երեք հրեա երիտասարդների հավատը:

## ❶ ՎԵՐԼՈՒԾԻՐ ԴՐՎԱԳԸ (ԿԱՐԴԱ ԴԱՆԻԵԼ 3:1–30):

3–7-րդ համարներն ընթերցելիս նկարագրիր այն ձայները, որ «լսում ես»:__________

______________________________

Քո պատկերացմամբ՝ ինչպիսի՞ն էր կրակով բորբոքված հնոցը:__________

______________________________

Ի՞նչ էր արտահայտում Նաբուգոդոնոսորի ձայնը, երբ նա հրամայում էր հնոցը սովորականից յոթ անգամ ավելի ուժեղ վառել (*նորից կարդա՝ 19-րդ և 20-րդ համարները*):__________

______________________________

Նկարագրիր հնոցի մեջ գտնվող չորս մարդկանց (*նորից կարդա՝ 24-րդ և 25-րդ համարները*):__________

______________________________

Ի՞նչ ուշագրավ հատկություններ ես տեսնում Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի մեջ, որը երևում է 16–18-րդ համարներից:__________

______________________________

## ❷ ՓՆՏՐՏՈՒՔՆԵՐ ԱՐԱ:

Օգտագործելով քո ձեռքի տակ եղած նյութերը՝ գտիր, թե ինչ երկարություն ուներ մեկ կանգունը, և հետո հաշվիր, թե ինչ մեծության էր Նաբուգոդոնոսորի կառուցած արձանը (*նորից կարդա՝ 1-ին համարը*):__________

______________________________

Երբ 19-րդ և 20-րդ համարները համեմատում ես 28-րդ և 29-րդ համարների հետ, կարծես ո՞ւմ է խորհրդանշում Նաբուգոդոնոսորը:__________

______________________________

### ❸ ԿԻՐԱՌԻՐ ՍՈՎՈՐԱԾԴ։ ԳՐԻ ԱՌ, ԹԵ ԻՆՉ ՍՈՎՈՐԵՑԻՐ...

այն մասին, թե ինչպես պետք է հարգանք դրսևորել նրանց հանդեպ, ովքեր իշխանություն ունեն։

այն մասին, թե որքան կարևոր է պաշտպանել սեփական համոզմունքները։

այն մասին, թե ինչպես է Եհովան աջակցում փորձությունների ժամանակ։

### ՀԱՐՑԵՐ ԽՈՐՀՐԴԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

Ի՞նչ իրավիճակներում գուցե փորձվի *քո* հավատը։

Ինչպե՞ս է Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի մասին պատմությունը օգնում քեզ հավատարիմ մնալու։

### ❹ ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ Ո՞Ր ԴՐՎԱԳՆ ԷՐ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՀԵՏԱՔՐՔԻՐԸ ԵՎ ԻՆՉՈ՞Ւ։



www.jw.org © 2011 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania